

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՄԱՅԻՍ 28Ը ԹԵՂՐԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի անկախութեան Զրգ տարեգարձը մեծ պատրաստութեամբ և ժողովրդական ոգեւորութեամբ այս տարի եւս տօնուած է Թեհրանի մէջ. ներկայ գտնուած են նաեւ պարսիկ և օտար հիւրեր:

Հանգէսին նախագահած է ընկեր Սահակեան (հայր Աբրահամ օրուհւն. բացման խօսքէն վերջ, խօսած են պարսկական խորհրդարանի հայ պատգամաւոր ընկեր Զօրա Սագինեան, և Լեւոն Մելիք Ստայեան, որոնք բացատրելով այդ օրուան նշանակութիւնը ընդգծած են Հ. Յ. Դաշնակցութեան դերը մեր անկախութեան պայքարի մէջ):

Արատաանութիւններէ և երգերէ վերջ, փոքր վճարի մը խաղցուած է աէր և տիկին Ս. Զափրաստէ:

Հանգէտը աեած է կէս գիշերէն վերջ ժամը մինչեւ երեք: Ժողովուրդին ընդհանուր խանդավառութիւնն ու սգեւորութիւնը ամէնուրեք, հանդէպ անկախութեան տօնին, մեծագոյն գրաւկանն է թէ հայ ժողովուրդը ի՞նչ անսահման սէր և գուրգուրանք ունի դէպի անկախ ու ազատ հայրենիքի գաղափարին հանգէպ:

ԵՒՐՈՊԱ

ԶԱՐԻՖԵԱՆ ՓԱՐԻՉ ՀԱՍԱՄ

Ինչպէս նախորդ օր գրած էինք, զերասան Զարիֆեան Ամերիկայէն մեկնած է Փարիզ, ուր հասած է արգէն իր արկնոջ հետ:

Հոն կարգ մը ներկայացումներ պիտի աայ:

Զարիֆեան հերքած է այն լուրը թէ Հայաստան պիտի երթայ, եղած հրաւերին վրայ, ինչպէս ծանօթ է, այս պահուս Փարիզ կը գտնուի նաև դերասանուհի Արմէնեան և երգչուհի Տիկ. Լիւսի Սեւուսեան:

Այս վերջինը երգահանգէս մը պիտի աայ: